# 375 Փրկի՛չ սիրելի, երբ ինձ մոտեցար,

1. Փրկի՛չ սիրելի, երբ ինձ մոտեցար,
Սուրբ Հոգու կրակ սրտումս վառեցիր,
Թող այդ կրակը վառվի հավիտյան,
Մաքրի աղտերից, լինեմ Քեզ արժան:
Որքա՜ն ծարավ եմ Քո կենաց ջրին
Եվ ինձ կյանք տվող անուշ խոսքերիդ:

2. Տե՛ր, Դու լավ գիտես սրտիս փափագը,
Որ նորից լսեմ քնքուշ Քո ձայնը,
Էլ մի՛ ուշանա, շուտով այցելի՛ր,
Լոկ մի բա՛ռ ասա, ինձ մխիթարի՛ր:
Քո խոսքն է, որ ինձ միշտ կյանք է տալիս
Եվ լույս է վառում իմ ճանապարհին:

3. Կուզեմ բնակվել Քո Սուրբ Խորանում,
Սուրբ կյանքով ապրել միշտ ես պատվիրում:
Ոչ մեկի կորուստ Դու չես ցանկանում,
Ապաշխարության դռներ ես բացում:
Ով որ այդ դռնով կուզի մտնել ներս,
Նա կյանք կունենա հավիտենապես: